† † Խ ሀ ጋ Վ Ե ቦ ሀ Ց † † EXALTATION OF THE HOLY CROSS

Խաչվերացի Տօնը, Քրիստոսի խաչին նուիրուած չորս տօներէն կարեւորագոյնն է, իսկ Հայաստանեայց Առաջելական Եկեղեցւոյ հինգ գլխաւոր տօներէն՝ տաղաւարներէն, վերջինն է։

Խաչը, դատապարտեալներու մահուան անարգ միջոցը, Քրիստոսի խաչելուԹեամբ դարձաւ իւրաքանչիւր քրիստոնեայի յարգանքի առարկան եւ փրկուԹեան խորհրդանիչը։

Յատկանչական է կիրակի Երեկոյեան կատարուող Խաչվերացի Թափօր-անդաստանը, ուր Խաչը կը զարդարուի անուչաբոյր ռեհանով, եւ հանդիսապետող եկեղեցականը ռեհանի չուր կը սրսկէ չրջապատող հաւատացեալներուն վրայ։ Իսկ Աւետարանի ընթերցումէն ետք, քահանան անդաստան կը կատարէ եւ ռեհանով զարդարուած խաչով կ'օրհնէ աչխարհի չորս կողմերը, խնդրելով Ամենակալ Տիրոջմէն որ աչխարհին խաղաղութիւն, առատութիւն եւ բարդաւաձութիւն պարդեւէ։

Մեծ մասամբ, Քրիստոնեայ եկեղեցիներ Խաչվերացի Տօնը կը յիչատակեն Սեպտեմբերի 14-ին, իսկ Հայոց Եկեղեցին՝ Սեպտեմբերի 14-ին ամենամօտիկ Կիրակին։

Feast of the Cross is the most important of the four feasts dedicated to the cross of Christ and is the last of the five main feasts of the Armenian Apostolic Church tabernacles.

The Cross, the precious means of death for the condemned, the crucifixion of Christ, the object of respect for every Christian and the symbol of salvation.

The crucifixion procession on Sunday is noteworthy, where the cross is decorated with fragrant basil and the presiding clergyman spays basil water on the surrounding believers. After the reading of the Gospel, the priest makes a pilgrimage and blesses the four corners of the earth with a cross decorated with basil, asking the Almighty Lord to grant peace, abundance and prosperity to the world.

For the most part, Christian churches commemorate the Feast of the Cross on September 14, and the Armenian church commemorates the Sunday closest to September 14.

U. ԽԱՉ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ SOORP KHATCH ARMENIAN APOSTOLIC CHURCH

≪ SUNDAY, SEPTEMBER 14, 2025



રૂપાઇ પર રુપ ઇ ૧ પ ઇ EXALTATION OF THE HOLY CROSS

ՀԱՄԱՍՏԵՂ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՅԱՏՈԻԿ ԺԱՄԵՐԳՈԻԹԻԻՆ <u>9:30</u>-ԻՆ SPECIAL SERVICE FOR HAMASDEGH ARMENIAN SCHOOL 9:30 a.m.

Ս. Պատաբագ Առ. Ժամը 10։30-ին հեռաբձակում Divine Liturgy 10։30 a.m. Live Streamed

> Soorp Khatch Armenian Apostolic Church 4906 Flint Drive, Bethesda, MD 20816 Office Hours: 10:00 a.m-2:00 p.m.

Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393

E-mail: soorpkhatch@verizon.net Web Page: www.soorpkhatch.org

Archpriest Fr. Sarkis Aktavoukian, Pastor Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

All Sick



Parishioners

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ

----(6.14-18)----

Գալով ինծի, քաւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Խաչէն զատ ուրիչ բանով պարծենամ։ Այդ խաչին միջոցաւ աչխարհը մեռած է այլեւս ինծի համար, ինչպէս ես մեռած եմ այդ աչխարհին համար։ Կարեւորը մարդուս Թլփատուած կամ անԹլփատ ոլյալը չէ, այլ՝ նոր արարած ըլլալը։ Թող Աստուծոյ խաղաղուժիւնն ու ողորմուժիւնը ըլլան բոլոր անոնց հետ՝ որոնք այս սկզբունքին համաձայն կ'ապրին. բոլոր անոնց՝ որոնք իր ընտրեալ ժողովուրդը կը կազմեն։

Այսուհետեւ, խնդրեմ, ռեւէ մէկը աչխարհիկ հոգերով Թող գիս չնեղէ, որովհետեւ ես Ցիսուսի կը պատկանիմ, ինչպէս մարմնիս վրայ վէրջերուն սպիները կը վկայեն։

Եղբայրնե՛ր, մեր Տէր Յիսուս Քրիստոսի չնորհքը ձեր բոլորին հետ րյլայ։ Ամէն։

ՑԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՑՈՎՀԱՆՆԷՍԻ

---- (3 · 13 <u>-</u> 21) ----

Մեր Տէրը Ցիսուս Քրիստոս կ'րսէ.-

- Ոչ ոք երկինք ելաւ՝ բացի մարդու Որդիէն, որ երկինքէն իջաւ, եւ որ երկինքի մէջ է։ Եւ ինչպէս Մովսէս պղինձէ օձր բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ Մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսգի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ։ Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աչխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսգի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ։ Որովհետեւ Աստուած իր Որդին աչխարհ դրկեց, ո՛չ Թէ որպէսգի աչխարհը դատապարտէ, այլ որպեսգի աչխարհը փրկե։ Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատայուն համար։

- Եւ դատապարտութիւնը այս է.

Լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին։ Ով որ չար գործ կը կատարէ՝ կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսգի իր գործերը չյայտնուին։ Սակայն ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է՝ լոյսին կու գայ, որպէսգի յայտնի ըլյայ թէ իր գործերը Աստուծոյ կամջին համաձայն գործուած են։

SCRIPTURE READINGS GALATIANS 6:14-18

May I never boast except in the cross of our Lord Jesus Christ, through which the world has been crucified to me, and I to the world. Neither circumcision nor uncircumcision means anything; what counts is a new creation. Peace and mercy to all who follow this rule, even to the Israel of God.

Finally, let no one cause me trouble, for I bear on my body the marks of Jesus.

The grace of our Lord Jesus Christ be with your spirit, brothers. Amen.

JOHN 3:13-21

"No one has ever gone into heaven except the one who came from heaven--the Son of Man. Just as Moses lifted up the snake in the desert, so the Son of Man must be lifted up, that everyone who believes in him may have eternal life".

"For God so loved the world that he gave his one and only Son, that whoever believes in him shall not perish but have eternal life. For God did not send his Son into the world to condemn the world, but to save the world through him. Whoever believes in him is not condemned, but whoever does not believe stands condemned already because he has not believed in the name of God's one and only Son. This is the verdict: Light has come into the world, but men loved darkness instead of light because their deeds were evil. Everyone who does evil hates the light, and will not come into the light for fear that his deeds will be exposed. But whoever lives by the truth comes into the light, so that it may be seen plainly that what he has done has been done through God."



Խորանի ծաղիկները կը նուիրեն Աշիգեան ընտանիք Խաչիկ Աշիգեաննի անուանակոչութեան տօնին առիթով։

Alter flowers are donated by Achikian Family on the occasion of the name day of Khatchig Achikian.

Ռեհանը կը նուիրեն Տիկ. Ազնիւ և Օրդ. Անի Աշիգեաններ՝ իրենց զաւկին եւ եղբօր՝ Խաչիկին անուանակոչութեան տօնին առիթով։

Basil is donated by Azniv & Ani Achekian on the occasion of their son/brother's name.



Անդաստան

Անդաստանը՝ Յայց. Առաբելական Եկեղեցւոյ Մէջ

Անդաստան բառացիօրեն կը նշանակե անդ, հանդ, արտ, դաշտ, արտորայք, ագարակ կամ առհասարակ հերկելի կամ պտղառատ տեղ՝ ուր վար ու ցանք կը կատարուի։ Երբեմն կը նշանակե նաեւ գիւղ կամ ագարակ։ Իսկ կրօնական իմաստով, անդաստանի արարողութիւնը աշխարհի չորս ծագերու օրինութիւնն է։

Յայց. Եկեղեցւոյ Տօնացոյցին համաձայն՝ «Անդաստան կատարել» կը նշանակե եկեեցւոյ ատեանին մեջ շրջելով՝ աշխարհի չորս կողմերը օրհնել։ Յին ժամանակ, այս արարողութիւնը կը կատարուեր եկեղեցիեն դուրս՝ արտերուն եւ այգիներուն մեջ։ Տպաւորիչ եւ սբանչելի արարողութիւն է անդաստանը եւ ունի հետաբրբրական բովանդակութիւն։

Մեզի յայտնի չէ թէ ե՞րբ, ինչպէ՞ս եւ որո՞ւ կողմե ներմուծուած է Անդաստանի արարողոթիւնը մեր եկեղեցւոյ մեջ, բայց համաձայն Տօնացոյցի ցուցմունքներուն Անդաստան կը կատարուի հետեւեալ տօներուն.

- -Չատկին` առաւօտեան եւ երեկոյեան
- -Նոր Կիրակիին` երեկոյեան
- -Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակիին՝ առաւօտեան
- -Կարմիր Կիրակիին՝ երեկոյեան
- -Երեւման Խաչին` առաւօտեան եւ երեկոյեան
- -Յինանց վեցերորդ Կիրակիին՝ առաւօտեան
- -ጓամբարձումին` առաւօտեան եւ երեկոյեան
- -Երկրորդ Ծաղկազարդին` առաւօտեան եւ երեկոյեան
- -Խաչվերացին` առաւօտեան եւ երեկոյեան, իսկ երեկոյեան, եկեղեցւոյ բակին մեջ` ռեհանով զարդարուած խաչով թափօր։
- -Տեառնընդառաջին՝ երեկոյեան եւ
- -Ծաղկազարդին՝ առաւօտեան եւ երեկոյեան



ANTASDAN

The Armenian Church celebrates the presence of God in the world with the special processional ceremony of Antasdan, a word which itself means "filed" or "fields".

In this service the four corners of the world are blessed and sanctified. Through our prayers and hymns of praise we ask our father to bless the food and fruitfulness of the earth. Also as caretakers of the "field" we ask for "divine protection" for the grounds of the earth, farms, gardens and the year's harvest and for monasteries, churches and all Christian leaders and people on the earth.

This service of Antasdan is frequently celebrated by many Christians, especially Armenian Christians. In the Armenian Church it is performed twenty-five times during the year: on the eve of the Feast of the Presentation of Christ to the Temple, on the Sundays from Palm Sunday to Pentecost, the second Sunday after the Pentecost, Transfiguration, Assumption of the Blessed Virgin Mary and, finally, the Exaltation of the Holy Cross which is an elaboration of the basic service.

The Antasdan on the Feast of the Exaltation is the most ceremonious. A cross is placed on a tray and adorned with sweet basil and rosewater and is then carried into the field, the world, manifesting Christ in our lives.



On the occasion of the Feast of the Exaltation of the Holy Cross, Der Hayr and the Board of Trustees congratulate all those who are named Khatchadoor, Khatchig, and Nishan, and wish them good health, happiness and a long and prosperous life.



Sunday, September 14 is the Feast of the Exaltation of the Holy Cross, *Khatchverats*, the Name Day of our church.

Immediately following Badarak, we will have an "Antasdan" Service in the church sanctuary.

Parishioners who wish to donate Basil are requested to bring it before 10:30 a.m.

ՄԵՂՔԸ՝ ԸՍՏ ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ

Մեղքը ուրիշ բան չէ եթէ ոչ օրէնքի դէմ գալ։ Եթէ չըլլար օրէնքը, չէր ըլլար նաեւ մեղքը։

Բաձարցակ անիշխանութեան եւ ազատութեան մէջ մեղք գոյութիւն չունի։ Եւ որովհետեւ երբեք բաձարցակ ազատութիւն չկայ եւ պիտի չըլլայ, մեղքն ալ միշտ գոյութիւն պիտի ունենայ։

Եւ արդէն կարելի չէ երեւակայել բաձարցակ անմեղ մարդ։ անմեղութիւնը մարդուն համար չէ։ Մարդը ստեցծուած չէ անմեղ մնալու համար։ Մարդը ստեղծուած է մեղք գործելու համար, բնութիւնն է որ այդպէս ստեղծած է զայն։

Հետեւաբար, մեղքն է, որ մարդուս մտքին մէջ կը ստեղծէ աստուածային անմեղութեան ու կատարելութեան գաղափարը։ Մեղքին շնորհիւ եւ մեղքին մեզի պատճառած տառապանքին շնորհիւ է, որ մենք կը սորվինք աղօթել։

Տառապանքը եւ կեանքի դժուարութիւններն են, որ մեզի աղօթել կը սորվեցնեն։

SIN ACCORDING TO PATRIARCH ARCHBISHOP SHNORK KALOUSTIAN

Sin is nothing but going against the law. If there was no law, there would be no sin either.

There is no sin in total anarchy and freedom. And because there is never absolute freedom and there will never be, sin will always exist.

And it is impossible to imagine an innocent person. innocence is not for man. Man is not created to remain innocent. Man was created to sin, it is the nature that created him that way.

Therefore, it is sin that creates the idea of divine innocence and perfection in the human mind. Thanks to sin and thanks to the suffering caused by sin, we learn to pray.

Suffering and life's difficulties are what teach us to pray.

- Կեանքը վայրկեանի մը պէս կ՛անցնի, ան ինքնին բան մը չէ, եւ իր արժէքը կախում ունի միայն ապրելու կերպէն. միայն կատարուած բարի գործն է, որ կը մնայ եւ կ՛արժեւորէ կեանքը։
- Ան ոr իrմէ ետք բաrի ու մաքուr կեանքի մը յիշատակը կը թողու, ան ապագայ սեrունդին անսպասելի բաrիքի աղբիւr մը կը թողու։
- Խաչը ապrուած Աւետաrանն է, իսկ Աւետաrանը՝ քաrոզուած Խաչը։
- Life passes like a moment, it is nothing in of itself, but its value depends only on the way you live. Only the good deed done remains and makes life worthwhile.
- He who leaves the memory of good and pure life behind him leaves a source of unexpected good to the future generation.
- The Cross is the lived Gospel, and the Gospel is the preached Cross.



2024 & 2025 Membership Dues – Parishioners who have not paid their 2024 Annual Membership dues are encouraged to remit payment. 2025 Membership Dues are also accepted now. The membership fees are \$150.00 per adult and \$50.00 for each full time student ages 18-26. These dues are 100 percent tax deductible.



Խաչվեrացի տօնին առիթով, հոգեհանգիստ կաrելի չէ կատաrել Կիrակի, 14 Սեպտեմբեrին։

> No hokehankisd service on Sunday, September 14 Exaltation of the Holy Cross